

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ա. Ի. Հ.
ԱՌԺՈՒԿՈՍ Ս. Տ.

ԿՅ ԴԵՆ-ԼՈՍԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՅ

ԲԺ. Ա. ԳԱՆՃԱՐՈՒՆ

ՔՈՒԽԹԵՇ

Զ-ԲՅՈՍՅՊՐՈՑՈՒԹՅԱՆ

ԵՆԵՐՈՏԵԿԱ
ԻՆՏԻՏՈՒՏԱ
ԲՈՒՏՈՔՈՎԵԴՆԻՅԱ
Ակադեմիա Նաւս
ՍՍՏՐ

616.9

2-15

Տ. ՄԵՏՆՈՒՄ

ՏՊԵՐԱԿԱՆ

Հ. Ա. Ա. Ա.
Ք. Ս. Ա. Մ. Ն. Ա. Ա.

ԱՐԿԻՎԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿՈՒՆԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻՍՏՆԻ ԿՈՒՆԵՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻՍՏՆԻ

ՄԱՍԻՆԻՍՏՆԻ

169
2-15

32-K
20 JUL 2010 LA 365

ՀԱՅ ԼՈՒՆԱԿՈՐԿՈՒՄԸ
№ 3 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱՆ № 3

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИИ СИНУГА
ВОСТОЧНО-ЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Գ Ո Ւ Թ Ե Շ

II ՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1931

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՏՄԱՐՈՒԹՅԱՆ

ԻՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԻՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԻՆ

ՄԵԾԻՆՈՒԹՅԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԻՆ

6
2

66169

22-15

32-K
A 365
20 000 2010

ՀԱՅԿ ԱՌԺՈՂԿՈՄԻՏ
№ 3 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИСТОРИКО-ПЕДАГОГИЧЕСКАЯ
Академии Наук
СССР

Գ Ո Ւ Թ Ե Շ

II ՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1931

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
 ՊԱՏՎԵՐ № 23
 ԳՐԱՌԵՊԳԼԵՎԱՐ 5288 (Բ)
 ՏԻՐԱԺ 4000



69554-68

ՄԻԿՐՈՒՆԵՐԸ

Վարակի հեղինակը միկրոբները կամ ման-
 նը, վերը հիվանդից կարող է փոխանցվել ա-
 սողջին:

Վարակի հեղինակը միկրոբները կամ ման-
 րեններն են, վորոնք սովորական աչքի համար
 մնում են աննշմարելի, և միայն նրանց կարելի
 չէ տեսնել միկրոսկոպի տակ:

Միկրոբները բնութձյան մեջ շատ շատ են:
 Նրանք ցրված են ամեն տեղ և բազմանում են
 միլիոններով: Նրանց սիրած վայրերն աղտո-
 տություններն ու ապակամություններն են.
 դուք նրանց կհանդիպեք աղտոտ ջրի, ողի,
 հողի մեջ: Իրա համար էլ մարդս դյուրու-
 թյամբ կարող է վարակվել անմաքուր ողից,
 ջրից ու հողից: Փոչին վարակի տարածման
 գլխավոր միջոցներից մեկն է:

Թորթ մանրեները վնասատու չեն. կան
 այնպիսիները, վորոնք մեր ստողության
 համար վտանգ չեն ներկայացնում, իսկ վո-
 մանք էլ նույնիսկ ոգտակար են. որինակ՝ ա-
 սանց թթխմորի հաց չենք կարող ստանալ,

իսկ թթիւոր ունենալու համար հարկաւոր են վորոշ տեսակի մանրեններ՝ սոււնիեր (դրոժ)։ Եւ այլնը կարող ենք ասել մամնի համար և այլն։

Մանրեններից շատերն ել մարդկութեան պատուհասներն են, մանավանդ անդրազեռ ու անկուլտուրական ժողովուրդների համար, վորոնք քիչ ուշադրութեան են դարձնում իրենց մարմնի, բնակարանների և շրջապատի մաքրութեան վրա, չգիտեն սիստեմատիկ ու տեսական պայքար վարել մանրենների դեմ։

Մանրեններից ամենից վտանգավորները, ամեն հոտակի համար ել, խոլերայի, ժամատախտի, տուբերկուլյոզի, սիֆիլիսի, բժուվոր, վորովայնի և անդրադարձ տիֆի բուցիլներն են։

Միկրոբները տարբեր դիմացկունութեան են ունենում։ Նրանցից շատերն իրենց համար անբարեհաջող պայմաններում, հատկապես լույսի և արևի ճառագայթների ազդեցութեանից, շատ շուտ վոչնչանում են։ Կան, ընդհակառակը, այնպիսիները, վորոնք ավելի դիմացկուն են և իրենց վարակի ուժը պահպանում են ամիսներ շարունակ։ Վերջիններիս շարքին է պատկանում նաև քութեչի մանրէն։ Այնպես վոր այն բոլոր իրերը, վորոնք շփման մեջ են յեղել քութեչով հիվանդների հետ, կարող են ամիսներից հետո ևս վարակի աղբյուր հանդիսանալ։ Առանձնապես վտանգավոր են հիվանդների շորերը։ Հիվանդի ա-

տողնայուց շարաթներ հետո նրա սենյակն ևս վարակի վորոշ վտանգ է ներկայացնում։ Դրա համար ել ախտահանութեանը կարևոր դեր է կատարում վարակիչ հիվանդութեանների դեմ վարելիք պայքարում։

Յերբ ասում են, թե մարդս վարակվել է վորեէ հիվանդութեամբ, դա նշանակում է, թե վորեէ ձևով մանրեն մտել է նրա որդանիզմի մեջ և առաջ բերել հիվանդութեան։ Վարակի պատճառը մանրեններն են։

Մի հիվանդութեան մանրէ չի կարող մի քանի հիվանդութեան առաջացնել. որինակ՝ խոլերայի միկրոբը կարող է միայն խոլերա հիվանդութեանն առաջացնել, տուբերկուլյոզինը՝ տուբերկուլյոզ, սիֆիլիսինը՝ սիֆիլիս...

Մարդկութեան մահացութեաններին խոչորակույն մասն առաջանում է վարակիչ հիվանդութեաններից։

Յերբ վարակիչ հիվանդութեանը մասսայական է դառնում և մեծ ել դոճեր տանում, ասում ենք, թե մենք դորժ ունենք կամաճարակի հետ։

Մանկական հասակի հիվանդութեաններից ծաղիկը, դիֆտերիաը, կարմրուկը, կապույտ հազը, — բոլորն ել վարակիչ հիվանդութեաններ են, վորոնք ժամանակ առ ժամանակ յերթվում են մեզ մոտ համաճարակի ձևով և մեծ դոճեր տանում։ Ինքեղն ել այդ հիվանդութեանների շարքին է պատկանում։ Վերջին

յերկու-յերեք տարիներում Միութենական
յերկրներում նա մեծ դոճեր տարալ:

1928 թվին քութեչի համաձարակը մեր
յերկրում մասայական բնույթ ստացալ, և
մեծ էլ դոճեր պատճառեց: Չնայած մեր կառա-
վարութեան ձեռք առած կարուկ միջոցներին,
քութեչը միանգամայն արմատախիլ չեղալ, և
վտանգ կա նրա նոր բանկման:

ԲՈՒԹԵՇԸ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԳՆԵՐԻ ԲՅՈՒՅՈՒՆ Ե

Քութեչը մանուկ հասակի հիվանդու-
թյուններից սմենից վտանգալորն է: Նա չա-
փաղանց վարակիչ է և համաձարակների ժա-
մանակ մեծ դոճեր և տանում, քանի վոր ծանր
բարզություններ և տալիս, և նույնիսկ վորոշ
զեպքերում դժվար և նրա դեմ պայքարել:

Քութեչի թույնը չափազանց դիմացկուն է
և նա պահպանում է իր վարակի ուժն ամիսներ
չարունակ: Քութեչով հիվանդի թուրքը, խոր-
խը, յորձուները, արցունքը, մեղը, արյունը և
բոլոր հոտամները քթից, բերանից, ականջից
—ամենն էլ մեծապես վարակիչ են: Դրա հա-
մար էլ բոլոր հնարավոր միջոցները պիտի
գործադրել՝ անմիջնապես մեկուսացնելու հի-
վանդներին և խնամքով ախտահանման յեն-
թարկելու այն բոլոր իրերը, վորոնք հիվանդի
գործածութեան առարկա յեն յեղել:

Մեծ քաղաքներում քութեչ հիվանդու-
թյունը համարյա միշտ էլ գոյություն ունի և

այն տեղերից էլ տարածվում և գավառներն ու
գյուղերը:

ՅԵՐԲ Ե ՏԱՐԱԾՎՈՒՄ ԳՈՒԹԵՇԸ

Քութեչը զարգանում ու տարածվում է
ցուրտ յեղանակներին, գլխավորապես աշուն-
չին ու ձմեռվա ամիսներին: Գարնանը նրա
թափը կտրվում է, իսկ ամառ ժամանակ հա-
մարյա թե չքանում:

Դիտողությունները ցույց են տալիս, վոր
քութեչի համաձարակը, մոտավորապես 10
տարին մեկ կանոնավորապես կրկնվում է: Քու-
թեչի վերջին համաձարակը Մոսկվայում տեղի
յե ունեցել 1916 թվին, ապա նա բռնկել է 1923
թվին և մեկ էլ 1929-ին; իսկ Հայաստանում՝
1905—7, 1915—17 և 1927—29 թվերին:

ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսաստանում, համաձարակի ժամանակ,
քութեչը մեծ դոճեր է պատճառում. 1905 թվին
քութեչից մեռել են 200 հազար յերեխա:

Տարբեր յերկրներում քութեչը տարբեր ա-
վերածություններ է անում: Մինչդո Ռուսաս-
տանում 1905 թվին հարյուր հազար բնակչու-
թյունից մեռել են 176 հոգի, Գերմանիայում
մեռել են 14, իսկ Յրանտիայում 2 հոգի:

Այս փաստը մի ավելորդ անգամ ցույց է
տալիս, վոր կուլտուրապես բարձր ժողովուրդ-
ների մեջ, ուր առողջապահական դիտելիքները
բարձր են, մահացություններն էլ չնչին են:

Պորհրդային Հայաստանում 28 թվին քու-
թեչով հիվանդների ընդհանուր թիվը յեղել է
4239. ասել է՝ 10.000 հոգուն ընկել է 46 հի-
վանդ: Մահացության միջին տոկոսը յեղել է
15, վորը պիտի համարել բարձր:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Քութեչ հիվանդությունն սկսվում է հան-
կարծակի, այն ժամանակ, յերբ յերեխան իրեն
զգում է առողջ ու առույգ: Իլխացավ է ունե-
նում, մարմինն սկսում է կոտրատվել, տա՛րու-
թյան աստիճանը բարձրանում է, կերածը
փախում է և կոկորդն ել ցավում, այնպես վոր
առաջին որերը յերեխան հրաժարվում է կե-
րակերից: Վզի դեղձերը մեծանում են և շոշա-
փելիս ել խիտ ցավ պատճառում:

Տաքությունն ու կոկորդի ցավը համարյա
բոլոր քութեչով հիվանդների մոտ մնայուն նը-
րորը քութեչով հիվանդների մոտ մնայուն նը-
շաններ են: 0

Շատ չանցած՝ յերեխայի մարմնի վրա այս
նշաններին հետևում է ցանր:

Սովորաբար ցանը կարմրավուն կամ կաս-
կարմիր է լինում, ծանր դեպքերում՝ մանիչա-
կազույն կամ թե կապտավուն:

Բնորոշ է հիվանդի դեմքի ցանր: Նա բրո-
նսում է հիվանդ յերեխայի ճակատը, այտերն ու
ականջները, իսկ շրթունքներն ու կրակը մնում
են ազատ. ստացվում է մի տեսակ յեռանկյու-
նի, սփրթնած:

Մի շարաթվա մեջ ցանն սկսում է դու-

նատվել ու իսպառ վերանալ. տաքությունն
ընկնում է, հիվանդն սկսում է իրեն լավ զգալ,
չնայած նրա գունատության ու ընդհանուր
թուլության: Միքանի որից վերջին նշաններն
ել անցնում են, և շրջապատը համարում է վը-
տանդն անցած: Բայց դա հաճախ խարուսիկ է
լինում:

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քիչ չեն դեպքեր, յերբ նոր բարդություն-
ներ են առաջանում, վորոնք լրջորեն վտան-
գում են յերեխայի կարևոր գործարանները՝
յերիկամունքները, ականջները, թոքերը, հո-
դակապերը... Նման յերևույթները կարող են
կրկնվել միքանի անգամ: Դրա համար ել պեսք
է խիտ զգուշ լինել և թեթևացող նշանները
չպիտի համարել վերջնական առողջության
ազդաններ, քանի վոր քութեչի բարդություն-
ներից յերեխաները կարող են ընդմիշտ թույլ
ու հիվանդ մնալ, իսկ վորոշ դեպքերում նույն-
իսկ աշխատանքի անընդունակ ու կիսանդամա-
լույծ, ինչպես, որինակ՝ յերիկամունքների
բորբոքման ժամանակ, շատ անգամ հիվանդի
մարմնի վորոշ մասերում ջրգողություն է ա-
ռաջանում, վորը դժվար բուժելի հիվանդու-
թյուն է: Կամ թե հիվանդի ականջներից թու-
րախի հոսումներ են տեղի ունենում և յերե-
խայի խլության պատճառ դառնում:

ՔՈՒԹԵՇԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Քութեչի վարակի գլխավոր բներից մեկն
էլ հանդիսանում է հիվանդ յերեխայի կոկոր-

դը: Յերբ նա հազում է, վարակի բացիլները
ցրվում են ուրի մեջ և տարածվում ամեն կողմ:
Ամենից առաջ մանրեները նստում են հիվանդի
անկողնին ու նրան շրջապատող իրերի վրա,
իսկ նրանցից ել փոխանցվում են ու տարած-
վում ավելի հեռուները: Տարածողներն ըստ
մեծի մասին լինում են հիվանդների հետ շրջ-
ման մեջ յեղողները, այն է՝ հիվանդապահներ-
ը, այցելուները, բայց ամենից շատ հիվանդի
յեղբայրներն ու քույրերը:

ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱՆ

Վարակի տարածումը մեծ է հատկապես
հիվանդության դադանի շրջանում, յերբ ան-
հայտ է հիվանդության ինչ լինելը: Այդ շրջ-
անում յերեխաներն ազատ դպրոց են հաճա-
խում, շրջում են փողոցներում, արամվայ կամ
ավտոբուս են նստում կամ այցելում են ծանոթ
ունեք: Վերջին դեպքերում նրանք կարող են
քուլթեչի վարակի լավագույն տարածողները
հանդիսանալ: Այնպես վոր համաճարակների
ժամանակ, յերբ յերեխաներից մեկն ու մեկի կո-
կորդը ցավում է, և տաքության ատիճանն էլ
բարձր է, պիտի մտածել քուլթեչի մասին և ան-
միջապես բժշկի դիմել: մանավանդ յերբ հի-
վանդն էլ կերածը յետ է բերում: Շատ հաճախ
է պատահել, վոր հիվանդն իրեն լավ է դուռ,
և քուլթեչի սկզբնական նշաններն էլ բացակա-
յում են. նման դեպքերում ազատ այցելում են
հիվանդին և նրա հետ միատեղ ուտում ու խը-

մում են. այսպիսով և՛ այցելուներն իրենք են
վարակվում, և՛ վարակի թույնը տանում են
հեռուները:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հիվանդության տարածման իսկական աղ-
բյուրը, ինչպես ասացինք, հանդիսանում է
ամենից առաջ ինքը հիվանդը, վորին հարկա-
վոր է անմիջապես մեկուսացնել: Ամենից լավը
հիվանդանոց ուղարկելն է: Բայց դրանով ա-
մեն բան չի վերջանում: Բոլոր իրերը, վորնք
գործածության կամ շփման մեջ են յեղել հի-
վանդի հետ՝ սպիտակեղեն, հագուստ, խաղա-
լիքներ, գրքեր, սենյակ, ուր պառկած է յեղել
հիվանդը, կարող են վարակի անմիջական աղ-
բյուր հանդիսանալ, հետևապես խնամքով պի-
տի ախտահանել: լավագույն ու վստահելի մի-
ջոցը վարակի իրերը բարձր ատիճանի տա-
քության յենթարկելն է, լինի դա ողի, թե գո-
լորչու միջոցով: Արժեք չներկայացնող իրերը՝
մաշված լաթերը, տետրերը, գրքերը պիտի
այրել. սպիտակեղենը և ամանեղենը տեական
յեռման ջրի մեջ պահել, իսկ վերարկուները,
վերմակները և հագուստները խնամքով դեզին-
ֆեկցիայի յենթարկել:

Սենյակների ախտահանությունը պիտի
կատարվի ուշադիր. հատակը, պատուհաննե-
րը նախ սապոնով, ապա լիզոլի, սուլֆամայի
կամ կարբոլիայի խառնուրդով լվանալ. այդ-
պիսով քուլթեչի մանրեները վուջնջանում, ան-

վտանգ են դնում: Լավ կլինի բնակարաններն ախտահանել Փորձալինի զուրրչիով, վորը թափանցում է սենյակի բոլոր ճեղքերը: Բայց դա կատարվելու յե բժշկի ձեռքով:

Հատուկ ուշադրութուն պիտի դարձնել մանկատներին, մսուրներին ու դպրոցներին վրա, ուր համաճարակը մեծ չափեր կարող է ընդունել:

Համաճարակների ժամանակ առանձնապես վտանգ են ներկայացնում կաթնավաճառները, հացթուխները և լվացարարները, վորոնց տներում քութեչով հիվանդներ են յեղել:

Նման դեպքերում պիտի ժամանակավորապես արգելել նրանց՝ շիում պահպանել ագրեքնակության հետ: Այդ հակողութունն իրենց վրա յեն վերցնելու գիտակից քաղաքացիները:

Թաղումների ժամանակ չպիտի ուղեկցել մեռելներին. վարակի տեսակետից նրանք ևս վտանգ են ներկայացնում:

ԱՌՍՁԻՆ ԽՆԱՄՔ

Քութեչով հիվանդներին առաջին խնամքը կայանում է նրանում, վոր նրանց մեկուսացնում են ընտանիքի մյուս անդամներից: Հատկապես տնից պիտի հեռացնել փոքրահասակ յերեխաներին: Լավ կլինի նրանց պահ տալ այնպիսի ընտանիքներին, ուր յերեխաներ չկան, կամ թե յեղածները մեծեր են:

Այն բոլոր յերեխաներին, վորոնք այսպես թե այնպես շիում են ունեցել քութեչով հիվանդների հետ, պիտի յերկու շաբաթ հակողության տակ առնել և թույլ չտալ դպրոց հաճախել կամ առողջ յերեխաների հետ իադալ: Յեթե այդ ժամանակամիջոցում յերեխան չհիվանդացալ, վտանգն անցած պիտի համարել, և նա կարող է դպրոց հաճախել:

Քութեչով հիվանդին պիտի տեղավորել մաքուր ու լուսավոր սենյակում, վորտեղից պիտի հեռացնել ավելորդ իրերը: Սենյակի տաքությունը պիտի լինի Յելսիուսի 16—18 աստիճան: Սենյակի ողն ամեն որ պիտի նորոգել: Հիվանդի անկողինն ու սպիտակեղենը պիտի մաքուր պահել և հաճախ փոխել: Լավ կլինի հիվանդի դռչակն ու բարձը խոտով կամ դարմանով լցնել, վորպեսզի հետադայում, յերբ հիվանդն առողջանա, հնարավոր լինի այրել:

Բարձր տաքության ժամանակ հիվանդի դլխին դնել սառուցող լի պարկ կամ ճակատին՝ սառը քացախաջրի կոմպրեսներ: Ահասարակ պիտի խոստովել ջերմություն իջեցնող դանադան դեղերից: Հարկավոր է հիվանդ յերեխայի բերանն ու կոկորդը հաճախ վողողել տալ պարզ աղաջրով:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ

Վարակից պաշտպանվելու լավագույն միջոցն է՝ բնավ չմտնել քութեչով հիվանդի

տուն կամ վերցնել այնտեղից իրեր: Հիվանդ
ունեցողներից իրեր կարելի չեն վերցնել միայն
նրանց արտահանելուց հետո: Տանը հիվանդ
ունենալու դեպքում տան մյուս անդամները,
մեծ թե յերեսա, յեթե նրանք նախապես մե-
կուսացած չեն, չպիտի դպրոց հաճախեն կամ
պոողջ յերեսաների հետ շփում ունենան: Հա-
մաճարակի ժամանակ հաճախ պիտի լվանալ
ձեռքերը, մանավանդ ուտելուց առաջ. լալ
կլինի դպրոցից կամ դրսից տուն վերադարձին
փոխել շորերը, վորովհետև փոշու միջոցով
կարելի չեն քուժեչի մանրեն տուն բերել: Առ-
հասարակ պիտի զգուշանալ և թույլ չտալ յե-
րեսաներին փողոցներում կամ հրապարակնե-
րում, բաց ամաններից իրիս, խմորեղեն,
խնձոր, սեմիչկա և այլ ուտելիքներ դնեն, վո-
րոնց վրա հեշտությամբ կարող է փոշի նըս-
տած լինել: Պիտի խուսափել դպրոցում կամ
հրապարակական զրոսավայրերում ընդհա-
նուր բաժակով ջուր խմելուց: Առհասարակ
չպիտի ուտել միևնույն ամանից կամ ուրիշի
դռալով: Չպիտի համբուրել, այլապես հեշ-
տությամբ կարելի չեն վարակվել:

Յեթե ինքդ հիվանդ ես, զգուշացիր, վոր
ուրիշին չվարակես: Մի անգամ քուժեչով հի-
վանդանալուց հետո հազվագյուտ է յերկրորդ
անգամ հիվանդանալը: Իայց միշտ պիտի հի-
շել, վոր յեթե ինքդ չես հիվանդանալ, կարող
ես ուրիշին վարակել: Դրա համար էլ ազատ

յեյումուտ չպիտի ունենաս հիվանդ ընկերների
տները:

Քեզ պաշտպանելով վարակից՝ պաշտպա-
նած կլինես ուրիշներին: Յերբ մեկը բոլոր
զգուշությունները դործադրում է, վոր չվա-
րակվի, նա միաժամանակ պաշտպանած է լի-
նում իր ընկերներին: Այս գիտակցությունը
հարկավոր է մասսայականացնել և բոլորի սե-
փականություն դարձնել, քանի վոր դա լա-
վագույն ձևն է քուժեչի դեմ պայքարելու:

Հիվանդապահ մայրերն ու քույրերը պի-
տի հսկեն իրենց մաքրության վրա, պիտի հա-
ճախ լվանան իրենց ձեռքերը, դրսի հետ հա-
րաբերություն չպահեն, չհամբուրեն հիվանդ
յերեսաներին: Վերջիններիս թուքը, խորխոր,
մեզը և այլ արտադրությունները խնամքով
ախտահանեն ու անվտանգ դարձնեն:

Հիվանդն անկողինը կարող է թողնել յե-
րեք-չորս շաբաթից վոչ շուտ, յերբ ջերմու-
թյան աստիճանը նորմալ է, յերիկամունքնե-
րս փնասոված չեն, մարմնի թեփոտելն էլ ան-
ցել է: Առաջին շաբաթներին հիվանդին դյու-
րամարս կերակուրներ պիտի տալ. պիտի
խուսափել մսից. ծարավը կտորելու չեն յե-
ռազրած ջրով, թեյով, լիմոնաջրով:

Լավագույն է՝ դիմել բժշկին և հիվան-
դության ընթացքում նրա խորհուրդներով ա-
ռաջնորդվել:

Քութեշով հիվանդներին վորքան կարելի յու շուտ պիտի փոխադրել հիվանդանոց, վորպեսզի շուտ ել բուժողութուն ստանան: Այլապես դժվար կլինի ժամանակին թեթևացնել հիվանդությունը և կանխել գալիք բարդությունները: Յեվ քանի վոր քութեշը ծանր հիվանդությունների շարքին և պատկանում, հետեվապես հիվանդին հարկավոր ուշադրութուն ու խնամք ավելի դյուրին և հիվանդանոցում ցույց տալ: Յերբեմն շտապ միջամտություն և պեռք միջին ականջի բորբոքման ժամանակ կամ յերիկամունքների բարդությունների դեպքում, հարկավոր են տաք վաննաներ, իսկ սրտի հանկարծակի թուլության ժամանակ սրսկումների կամ պահանջված դեղորայքի դործածություն. սրանք բոլորն ել հնարավոր են միմիայն հիվանդանոցում: Վերջապես վորքան շուտ հիվանդը փոխադրվի հիվանդանոց, այնքան պակաս կլինի շրջապատի վարակման հավանականությունը:

Ընդունելով հիվանդանոցների մեծ նշանակութունը վարակիչ հիվանդությունների դեմ տանելիք պայքարում, պիտի հնարավոր միջոցներին դիմել, վորպեսզի նրանք կանոնաձ լինեն իրենց կոչման բարձրության վրա: Այլապես հիվանդանոցները չեն վայելի այն մեծ հարգանքն ու վստահությունը, վորին իրոր արժանի յեն:

Քութեշի բաժանմունքն այնպես պիտի կազմակերպել, վոր նա իսկապես ոգուտ տա և վոր թե վարակի տարածման բուն հանդիսանա: Դրա համար ել ունենալու յե բոլոր հարմարությունները վարակը փոչնչացնելու համար. նմանապես ներքին կարգ ու կանոնն այնպես և դրվելու, վոր վարակը հիվանդանոցից վոր մի ձևով հնարավոր չլինի դուրս տանել: Իսկ վերջին հանդամանքը կախված և վարակիչ հիվանդանոցներում ծառայող աշխատակիցների գիտակցությունից:

Աշխատանքները վերջացնելուց՝ հետո բոլոր բուժաշխատակիցները, վորոնք պիտի հիվանդանոցը թողնեն, հնարավորություն են ունենալու սապրնով լավ լվացվելու և հագուստներն ել փոխելու: Խիստ հսկողություն և նշանակվելու հիվանդատեսների վրա. լավ կլինի քութեշի բաժանմունքն այնպես կազմակերպել, վոր դրոխց կարելի լինի հիվանդներին տեսնել. իսկ յեթե դա հնարավոր չե, այն ժամանակ խստիվ պիտի սահմանափակել այցելուների թիվն ու սրերը և այնպես անել, վոր նրանք վարակի տարածման ազդյուր չհանդիսանան:

Համաճարակի բնույթն ու աշխուժությունը շատ անգամ կախված են այցելուների թույլ ու անզուշ կազմակերպությունից: Պիտի մեծ ուշադրություն դարձնել նաև հիվանդների հիվանդանոցից դուրս գրելու վրա: Այնպես որ հետապնդենք, կարող են նույն

89-155569



պես մեծ վասնոյ ներկայացնել վարակի տա-
րածման համար:

Հիվանդանոցն ունենալու յի կահավորու-
թյունն և հարկավոր քանակով ել ծառայողնե-
րի կազմ: Սյլրայես կառուցին հիվանդները, և
հիվանդանոցն ել նպատակին չի ծառայիլ:

ՊԱՏՎԱՍՏԻ ԱՆ ՀՐԱՏԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1928 թվի մայիսին Մասկիայում անդի
ունեցած համաճարակաբնական մանրեւորանե-
րի, համաճարակադիտական և սանիտարական
բժիշկների համապատասխան հակաքուժեչային
վակցինայի մասին հանել և հետեյալ փորո-
շումը. «Հակաքուժեչային վակցինայիան հա-
մարել գիտականորեն հիմնավորված պրոֆի-
լակտիկ միջոց և հանձնարարել նրա յայն պոր-
ժադքուժյունը»:

Վորպես կանխիչ միջոց մեղանում կա-
տարվել և այժմ ել շարունակվում են հակա-
քուժեչային վակցինայի մասսայական սրբա-
կումներ, վորոնք ավել են միանդամայն գրու-
կան արդյունքներ:

1928—29 թվերին ՊորՏրվային Հայաս-
տանում ներարկված են՝ 1-ակում անգամ՝
133.300 յերեխա, 2-ակայն՝ 120.300 և 3-ակում՝
82.000: Սրակումները կատարվել են մինչև 14
տարեկան հասակ ունեցող յերեխաների վրա,
վորոնց մեջ գերակշռել են 1—8 տարեկան-
ները:

1928 թվի դեկտեմբերին, յերբ մեղանում

սպասվում էր քուժեչ համաճարակի ուժեղ
թափ, սրակումներից հետո սկսում է աստիճա-
նաբար իջնել: 1928 թվի ոգոստոսին քուժե-
չով հիվանդների թիվը յեղել է 251, սեպտեմ-
բերին՝ 437, հոկտեմբերին՝ 876, նոյեմբե-
րին՝ 1142, դեկտեմբերին բարձրանալու փո-
խարեն իջնում է 901-ի, 1929 թ. հունվարին՝
460-ի, փետրվարին՝ 262-ի, մարտին 240-ի,
ապրիլին՝ 178-ի, մայիսին՝ 112-ի և այլն:

Բացի համաճարակի թուլացումից, քու-
տուղված փաստ է, վոր հակաֆուքեչային
վակցինայով սրակված յերեխաները քեքե են
անցկացնում նաև իրենց հիվանդությունը, և
չառ չնչին են մահացությունները, 100 սրբա-
կածներից միայն մեկն է հիվանդանում ֆու-
քեչով:

Ինչով բացատրել վակցինացիայի նման
բարերար ազդեցությունը:

Ծաղկի, դիֆտերիաի և այլ վարակիչ հի-
վանդությունների փորձերից գիտենք, վոր
միևնույն միկրոբի թույնը մտցնելով յերեխա-
ների սրգանիզմի մեջ, լինի նա սպանված դր-
քության մեջ, թե կենդանի, սակայն վերջինս
թույլ չափով, մարմնին ապիս և դիմացկու-
նություն. դրանով ստիպում ենք մանկան որ-
դանիզմին պատրաստել հակաքույն և այդ
ձևով դիմադրել վարակիչ հիվանդություն-
ների քայքայիչ ու մահարեր ազդեցություն-
ներին:

Նման դեպքերում մենք ասում ենք, թե

մեր որդանիզմը ձեռք է բերում իմնունիտետ, այսինքն՝ այլևս հիվանդութեան վարակ չլինողունում:

Իմնունիտետ են ունենում նաև բոլոր հիվանդացածները:

Մեր որդանիզմի վարակ չընդունելու տեղի ունեցողները տարբեր է, նայած հիվանդութեանն էրին. նա տեղում է վեց ամսից մինչև մի քանի տարի:

Յերբ այս կամ այն վարակիչ հիվանդութեանների մասերեն ճիշտ հայտնի չէ, սակայն հայտնի չէ, թե մարմնի վրա մասերում և որդաններում է վարակը զարգանում, այս կամ այն ձևով, վերցնում են կենդանի թույնը և նրանից պատրաստում են սրտկաման նյութ: Ուրիշակ՝ կատաղութեան դեմ սրտկալիչը նյութը պատրաստում են կատաղած շան ուղեղից: Բուժեչիներ վերցնում են հիվանդի արյունը, խառնում են հատուկ բույյոնի հետ, ուր բազմանում են քութեչի միկրոբները, ապա սպանում են և այդ ձևով սրտկաման յերեխաներին:

Հակաբուժեչային վակցինան իր ուժը պահպանում է մոտ մեկ տարի և դա այն դեպքում, յերբ սրտկամանը կատարվում է յերեք անգամ, ամեն 4—5 որը մեկ:

Հակաբուժեչային պատվաստը միանգամայն անվտանգ է. շատ քիչ դեպքերում սրբուկած տեղը ցավում է ու կարմրում. յերեխաներից վսմանք ել մեկ-յերկու որ անաբամա-

դիր են դառնում, և ապա ամեն ինչ անցնում է:

Հակաբուժեչային վակցինացիան յերբեք քութեչ հիվանդութեան չի առաջացնում: Իսկ յեթե պատահում է, վոր սրտկամաներից հետո յերեխայի մարմնի վրա յերեկում է ցան, կամ կոկորդը թեթև ցավում է, առանձին անհանգրատութեան կարիք չկա. դրանք վարակիչ չեն:

Միանգամայն անտեղի պիտի համարել այն վտանգը, վոր շատերը վերագրում են համաճարակների ժամանակ արված վակցինացիային: Հակաբուժեչային վակցինան դադարի չըջան ապրող յերեխային վոր մեկ վնաս չէ պատճառում:

Հակաբուժեչային վակցինացիան պարտադիր է լինելու 1—10 տարեկան յերեխաների համար:

ԳՍՅՔԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒԺԵՐՈՎ

Յեթե քութեչի համաճարակի վտանգ կա, նախապես պատրաստվելու յենք ուժեղ պայքարի: Մենք պիտի վոջնչացնենք այն բոլոր վնասատուները, վորոնք կարող են վարակման բուն հանդիսանալ: Բուժեչով հիվանդ չըջաններում պիտի խստիվ արդելել հիվանդ յերեխաների տներ հաճախելը. չպիտի թույլ տալ հիվանդներից դրքեր և այլ իրեր վերցնել:

Լավագույնն է, վոր մեր աշխատավորութեանն ու մատաղ սերունդն ինքն ըմբռնի նա-

խաղաղապետական միջոցների կարեւորութիւնը և խիստ հսկողութիւնն նշանակի տանը, զպրոցում և՛ դուրսը: Անմիջական աշխատանքի նըման ձևը հնարավորութիւն կունենա դուրսութեամբ կանխել հիվանդութիւնները և թույլ չտալ համաճարակներին լրջն տարածումը:

Քուլթեչը, ինչպէս և մյուս վարակիչ հիվանդութիւնները, զարգանում են անմաքուր, խոնավ ու խափար բնակարաններում, ուր չեն հեռուում մարմնի, հագուստների, սպիտակեղենի ու ամանների մաքրութեան, ուր չկա կանոնավոր սղախոխութիւն, և չեն թափանցում արևի ճառագայթները:

Կեղտը, անմաքուր ջուրը, թարմ սղի բացակայութիւնը, անբավարար ու վատ սնունդը—սրանք են համաճարակների տարածման գլխավոր պայմանները:

Քուլթեչի դեմ կարելի չէ կովել միմիայն գինված առողջապահական գիտելիքներով: Իսկ դրա համար պիտի աշխատեն վոչ միայն մեր սան-բուժ. հիմնարկները, այլ վողջ ազգարնակութիւնը, հատկապէս մեր նոր կյանքի դարբնողները՝ յերիտասարդ սերունդը և աշխատավորութիւնը:

Առանց մատաների լրջն աջակցութեան, կարելի չէ հաստատ անել, ամեն գործ մատնը ված պիտի համարել անհաջողութեան:

ԼՈԶՈՒՆԳՆԵՐ

1. Յեթե ինքզ հիվանդ ես քուլթեչով, գոտչացիր, վոր չվարակես ուրիշին:
2. Քեզ պաշտպանելով վարակից՝ պաշտպանած կլինես նաև ուրիշներին:
3. Քուլթեչի ժամանակ դպրոցներում կամ հրապարակական վայրերում ընդհանուր բաժակով ջուր մի՛ խմիր:
4. Չպիտի ուտել միևնույն ամանից կամ միևնույն զգալով:
5. Չպիտի համբուրել:
6. Խուսափի՛ր փողոցում բաց ամաններից իրիս, խմորեղեն, խնձոր և այլ ուտելիքներ գնելուց և ուտելուց. նրանց վրա նստած ե լինում փոշի:
7. Դպրոցից կամ դրսից տուն վերադարձիդ՝ փոխիր հագուստդ, վորովհետև փոշու միջոցով կարելի չէ քուլթեչի մանրէները տուն բերել:
8. Մի՛ հաճախիր քուլթեչով հիվանդներին բնակարան:
9. Առանց ախտահանվելու դպրոց մի՛ հաճախիր, յերբ յեզրայրդ կամ քույրդ հիվանդ են քուլթեչով:
10. Քուլթեչով հիվանդ ընկերոջից գիւրջ կամ տեսրակ մի՛ վերցնիր. կարող ես վարակվել:
11. Քուլթեչով հիվանդ ունեցող հացթուխից կամ կաթնավաճառից մի՛ գնիր հաց և կաթ:

12. Խնամքով ախտահանիք բնակարանը,
յերբ ունեցել ես քութեչով հիվանդ:

13. Քութեչը զարգանում է անմաքուր
բնակարանում, ուր չեն հետևում սենյակի,
մարմնի, հագուստների, սպիտակեղենի և ա-
մանների մաքրության:

14. Պատվաստովիք հակաքութեչային վակ-
ցինայով, յերբ համաճարակի վտանդ կա:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Միկրոբներ	3
2. Քութեչը վարակիչ հիվանդություն է	6
3. Յերբ և տարածվում քութեչը	7
4. Մահացություններ	7
5. Հիվանդության նշանները	8
6. Բարդությունները	9
7. Քութեչի տարածումը	9
8. Գաղտնի շրջան	10
9. Նախադուշական միջոցներ	11
10. Ծոռջին խնամք	12
11. Ինչպես պիտի պաշտպանվել	13
12. Հիվանդանոց	16
13. Պատվաստի անհրաժեշտությունը	18
14. Պաշար բնդհանուր ուժերով	21
15. Լոգույններ	23



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՐԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՐԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՐԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՐԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1991

«Ազգային գրադարան»



NL0263967

1931 10 1000

7069

1362
112-

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



купил

Д-р А. П. Голубев

Октябрьские

**Географический институт
Академии Наук
СССР**

1931